

մէ նաեւ Հ. Սուքիաս Սոմալեան, նախ իրր վշտաչարչար գործակից Հ. Սարգսի, և յետոյ՝ իրրեւ Ընդհ. Աբրահայր, որ հակառակ իր կրած տառապանքներէն՝ ժառանգած հիւանդագին վիճակին՝ այնքան աշալուրջ ու խոհական իմաստութեամբ հսկեց գործին ընթացքին վրայ, որ անկորուստ ձեռք անցնին կտակները՝ Ազգիս զաւակաց դաստիարակութեան համար: Հետզհետէ յիշատակելի են իրրեւ արդիւնաւոր գործիչներ՝ կտակներու գործառնութեանց մէջ՝ Հ. Յովհաննէս Սորկուճեան, Հ. Յար. Ազգերեան, Հ. Եսայի Մզրաքեան, Հ. Աղեքս. Պէշիկթաշլեան և ուրիշ Հայրեր, որոնք տաժանելի ճանապարհորդութիւններով ու վիշտերով մինչեւ իսկ վտանգեցին առողջութիւններն:

Սոմալեան Աբրահայր կտակի մասին յետ որոշ հաւաստիքներ ձեռք ձգելու շնորհիւ Հ. Սարգսի՝ « որում միայն էր տալ մեզ — կ'ըսէ — գիտել որոշ ինչ ըստ կարի յաղագս ապագայ եկամտից Մուրատեան դպրոցին» (գր. առ Հ. Անանիա Ճեւրիսեան, 1833 Մայիս 11), արդէն գործին տուած է պէտք եղած ուղղութիւնը: Ի պատրաստութիւն Փատուայի Մուրատեան դպրոցին՝ վենետիկէն իրմէ պաշտօնաթուղթ մը կը հասնի կանխապէս ի Պոլիս առ Հ. Անանիա Ճելալեան՝ այսպէս. « զի ի բազում ամաց հետէ ունիս հմտութիւն, և բնական ճարտարութիւն՝ կարգէ (զքեզ հասարակութիւնս) գործարիչ և վերակացու» (գր. 1833 Մարտ 12) ի Ղալաթիա տուն մը վարձելու և հոն դպրոց բանալու, « որ մայր դպրատանս ունի որդեգրիլ իրրեւ օգնական» (Կմկ. առ Հ. Ան. Ճել. 1833 Մայիս 11): Աբրահայր ազգասէր ոգին կը նկատէ մանաւանդ « բովաւրի... տեսանել միանգամայն զոյն ըստ օրինի կանոնական բարեկարգ դպրոցաց առ ի երագահաս օգնութիւն պիտոյից կանխեալ նորափիճակ ազգիս, մինչչեւ է մայր դպրատանս որ աստ ի նոյնն ուղւոյ եղեալ» (Անդ):

Ճելալեանի պատրաստած ծրագիրը վարչութեան կողմանէ լաւ կ'ուսումնասիրուի. միանգամայն սկիզբէն նկատի կ'առնուին՝ բարեսէր և հեռատես մտածութեամբ՝ ապագայ աշակերտաց ընդունակութեանց մէջ անհաւասարութեան պատահականութիւններ կամ ուրիշ պարագաներ, և յետոյ պաշտօնական հաւանութիւնը կը հաղորդուի առ Հ. Անտոնիոս այսպէս. « Յասացելոցս մարթիս ինքնին իմաստասիրել զընդունելութիւն առաջնոյ կարծեացդ զոր ասես. « Լաւ լիցի աստէն ուսուցանել... զամենայն կարեւորսն, եւն. », զի որոց ոչ յաջողեցի զալուստ այսր ի չներել պայմանացն որ վասն առաքելաց, զոնէ այդր վաղվաղակի պիտանի լինիցին և անձանց և ազգին՝ ունելով բաւական ժամանակ յուսանել արհեստ ինչ որով կեցցեն: Իսկ այսր եկողացն կարճեցցին աշխատանք, և արագ արագ զարգացին յեւս բարձրագոյնսն և ի կարեւորագոյնսն. ընդ այս և մեր վաստակը թեթեւացին, և քաջալերիցիմք եւս յուսով ի սուղ ժամանակի զառաջնապտուղսն յուսթի ժողովելոյ յաշակերտելոցն աստ առ մեզ » (Անդ):

Եռուզեոր հետզհետէ կ'ընդարձակուի կրթական խնդրոյ շուրջ՝ Միաբանութեանս մէջ. դպրոցի թիւն իսկ կ'աւելնայ ի Պոլիս քիչ ժամանակէն. միւս կողմանէ Փատուայի Մուրատեան վարժարանի բացման նախօրեակն ալ վերահաս կը թուի, այլեւս քիչ ամիսներու խնդիր: Ուստի 1833 Ապրիլ 27-ին (օր երջանիկ փոխման Միւ. Աբրահայր) Հ. Ան. Ճելալեանի կը ղրկուի առ ի կանխահոգութիւն՝ ԿԱՐԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՄԱՆԿԱՆՑ ԱՌԱՔԵԼԵԱՑ Ի ՊՈԼՍՈՑ՝ ՅՈՒՍՈՒՄՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԴՊՐՈՑԻՆ խորագրով 10 հրահանգներէ կազմուած « Պայմանք ընտրելի մանկակց», որպէս զի ըստ այնմ աշակերտներ պատրաստուելով՝ իր ժամանակին ընտրութիւն ըլլայ անոնցմէ: Սոյն « Պայման » ներէն յետոյ զետեղուած է նաեւ « Յոռցակ հանգամանաց ընտրելի մանկուոյն յոստումն Մարտտեան դպրատան », երկուքի բաժնելով զայն: Առաջինը կու տայ բարոյական, ֆիզիքական և մտային 13 թերութիւններ, իսկ երկրորդը՝ 13 կատարելութիւններ:

Նոյն տարւոյ Օգոստոս 28-ին ալ Աբրահայրը Փատուայի դպրոցին սկզբնաւու-